ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/162

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9851-2021 գրությամբ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 11.06.2021թ. Ե/40/1497-21 գրության հիման վրա, 17.06.2021թ. թիվ 26/26-1/9851-2021 գրությամբ նախաձեռնել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/162 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի նախապատմությունը և փաստերը

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-76/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 18.05.2021թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 02.06.2021թ. ներառյալ :

Հաշվի առնելով, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի գործունեության (գտնվելու վայրի) հասցենք. Երևանն է, իսկ Պատվիրատուն գտնվել է Արմավիրի մարզում, ք. Մեծամորում, ապա ՍՊԸ-ն սահմանված ժամկետի վերջին օրը՝ 02.06.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն սահմանված

ժամկետում կնքված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը չի ներկայացել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին/:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի “ա”վ ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված”վ:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-64/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ.-07.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 18.05.2021թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 02.06.2021թ. ներառյալ :

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 02.06.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ հաշվի առնելով, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի գործունեության (գտնվելու վայրի) հասցենք. Երևանն է, իսկ Պատվիրատուն գտնվել է Արմավիրի մարզում, ք. Մեծամորում, ապա ՍՊԸ-ն այդ պատճառով է որոշում կայացրել ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին փոստային առաքման միջոցով:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը չի ներկայացել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին/:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Այսպիսով, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (18.05.2021թ.) հետո 10 աշխատանքային օրվա

ընթացքում (18.05.2021թ.-մինչև 02.06.2021թ. ներառյալ), այն է՝ 02.06.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը չի ներկայացել Պատվիրատուին /տես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն/:

Հատկանշական է, որ 02.06.2021թ. «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված”վ: Իսկ ինչպես արդեն նշել ենք, “Գնումների մասին”վ ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ պայմանագիրը Պատվիրատուին ներկայացվել է նաև սահմանված ժամկետում, այն է վերջին՝ 10-րդ օրը:

Պետք է փաստել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Այսպիսով, ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային ամսաթվի

հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Պայմանագրի նախագիծը ուղարկվել է մասնակցին 18.05.2021թ., հաջորդ օրվանից հաշվարկված վերջին 10-րդ աշխատանքային օրը ստացվում է 02.06.2021թ., որ օրն էլ ՍՊԸ-ն «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ կից փաստաթղթերով:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 02.06.2021թ. «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ խնդրում ենք «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել “Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 3-4 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/162 ընթացակարգի շրջանակներում 23.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.06.2021թ. Ե/40/1497-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ՆՏՎ (CBPTK) համակարգի արդիականացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-76/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ս/թ. մայիսի 11-ին թիվ 3 որոշմամբ 8-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն և 18.05.2021թ.

անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագրի նախագիծը ուղարկվել է վերջինիս կողմից մասնակցության հայտում նշված էլեկտրոնային հասցեին:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 15 աշխատանքային օրվա ընթացքում (քանի որ պայմանագրով նախատեսված է եղել կանխավճարի տրամադրման հնարավորություն) «ՀԱԷԿ» ՓԲԸ պետք է ներկայացներ պայմանագրի ստորագրված տարբերակը՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին: Սահմանված ժամկետում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Առաջնորդվելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասվ և Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով հունիսի 9-ին ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ կից ներկայացվում են Ընկերության տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/162 ընթացակարգի շրջանակներում 23.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/162 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/162 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-76/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.05.2021թ. էլեկտրոնային եղանակով «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով Ընկերության կողմից հաստատված տարբերակը 15 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել (եթե պլանավորվում է օգտվել կանխավճարի տարբերակից), հակառակ դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ կից գրությամբ հաստատված պայմանագրի նախագիծը՝ երկու օրինակից, պայմանագրի և որակավորման ապահովումները:

4.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մինչև 08.06.2021թ. «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն 15 աշխատանքային օրվա ընթացքում (քանի որ պայմանագրով նախատեսված է եղել կանխավճարի տրամադրման հնարավորություն) «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին պետք է ներկայացներ պայմանագրի ստորագրված տարբերակը՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին:

Սահմանված ժամկետում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9851-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 11.06.2021թ. Ե/40/1497-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա *ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի* ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,***

չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-76/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.05.2021թ. էլեկտրոնային եղանակով «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով Ընկերության կողմից հաստատված տարբերակը 15 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել (եթե պլանավորվում է օգտվել կանխավճարի տարբերակից), հակառակ դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ կից գրությամբ հաստատված պայմանագրի նախագիծը՝ երկու օրինակից, պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մինչև 08.06.2021թ. «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն 15 աշխատանքային օրվա ընթացքում (քանի որ պայմանագրով նախատեսված է եղել կանխավճարի տրամադրման հնարավորություն) «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին պետք է ներկայացներ պայմանագրի ստորագրված տարբերակը՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին:

Սահմանված ժամկետում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2021/162 ընթացակարգի քննության շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ 02.06.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «ԿԱ ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

<u>Ի հավաստումն նշվածի Ընկերության կողմից ներկայացվել է փոստային</u> **<u>անդորրագրի բնօրինակը, համաձայն որի N 805 առաքանին (կոդ RG031669934AM,</u>**

ուղարկող «ԿԱ ընդ Կո Թրայդ» ՍՊԸ, ստացող՝ «Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ) «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ է հանձնվել 02.06.2021թ.:

Վերը նշված փաստական հանգամանքով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմել է Պատվիրատուին և խնդրել է հայտնել, արդյո՞ք «Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն ստացել է «ԿԱ ընՍ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագիրը, թե՞ ոչ:

Ի պատասխան՝ Պատվիրատուն տրամադրել է «ԿԱ ընՍ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով ուղեկցող գրությամբ ուղղարկված միակողմանի ստորագրված N «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-76/21-01/144» ծածկագրով պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ ***չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին պայմանագրի նախագիծը՝ 18.05.2021թ. ներկայացված լինելու պայմաններում, այն պատվիրատուին ներկայացնելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օր ժամկետը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, հոսել է 19.05.2021թ. և լրացել 02.06.2021թ. ներառյալ, այսինքն՝ Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին «Հայփոստ» ՓԲԸ-ին հանձնվել են սահմանված ժամկետի ընթացքում, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 17.06.2021թ. թիվ 26/26-1/9851-2021 գրությամբ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**